

լեան Մաշտոցի, զոր զարթոյց աստուածայինն շնորհի ի ցանկութիւն այս<sup>1</sup> կարգել զվաղընջուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք<sup>2</sup> էր հոգացեալ արկանել ի կիր, այլ ասորի մեծաջան եւ անաւգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ. յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք եւ թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն. եւ ուսուցիչքն հանելով յոգւոց եւ հառաչելով՝ զղջանային զսնտի ջանն իւրեանց, յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին աւգտեալ ի վարդապետութենէ հոգեւոր խրատուցն, որ է կերակուր եւ պարարումն իմաստնախնդիր անծանց. մինչեւ գտաւ գիր եւ աշողելով<sup>3</sup> Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զաւրանայ: 3 Համայն եւ զայս վաստակոյս կարգումն քոյին<sup>4</sup> առաքինութեանդ գիտութեամբ<sup>5</sup> եղիցի եւ կատարեա՛<sup>6</sup>: 4 Արդ՝ որպէս եւ<sup>7</sup> սուրբ Նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ի խոշտանկանսն<sup>8</sup> անվնաս աջով հզաւրին՝ ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ՝ պահեալ շնորհեցաւ եւ քեզ, Նորին շառաւեղի<sup>9</sup>, վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտամանս այսորիկ, սկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ եւ լինել նմանող սուրբ Նախնւոյն քում, որ յանգիտութենէ ի ճմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց: 5 Արդ՝ եւ դու յանաւգուտ մուրողաբանութենէն ի ստոյգ հոգէշահ եւ եկեղեցագարդ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի, լնուլ զպակասութիւնս զայս, մնացեալ ի սուրբ Նախնեացն քոց. զոր պահեաց քեզ Աստուած, զոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ: 6 Վասն զի եւ ոչ կարացաք հմուտ լինել եւ տեղեկանալ այդչափ արուեստաւոր ուսմանցդ, որպէս եւ քեզ տուաւ զաւրութիւն ճարտարութեան ի վերին աւգնականութենէն յողագս քո առաքինասէր եւ պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշգրտապէս աւրինակեցեր ի քեզ զվարս երանելւոյ<sup>10</sup> հաւր քո Ներսէսի»:

7 Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթողիկոսն<sup>11</sup> Հայոց սուրբն Սահակ ի թագաւորէն Հայոց՝ Վռամշապիոյ եւ յերանելւոյն Մաշտոցէ եւ յա-

1 ՏՏ. յայս

2 Ձ. ուրեք

3 ՏՏ. յաշողելով

4 ՏՏ. եւ քոյին

5 Ձ. գիտութիւն

6 Ձ. կատարեաց

7 Ատ. եւ որպէս

8 ՏՏ. խոշտանկանսն

9 ՏՏ. շառաւիղի

10 ՏՏ. երանելոյ

11 Ձ. նախ՝ կաթողիկոսն, յետոյ՝ ուղղած այսպէս. Ատ. կաթողիկոսն